

ՀԱՄԱՐԱՐԲԱՌ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՅԸ

(Շար. տե'ս «Բազմավեպ», 1974, ք. 1-2, էջ 177-190)

Մեզի հասած չորս Աւետարաններէն առաջին երեքը, թէեւ տարբեր հեղինակներէ, տարբեր տեղեր եւ տարբեր ժամանակներ գրուած, սակայն իրարու հետ այնպիսի սերտ կապակցութիւն մը ունին, որ դանոնք կոչած են «Համաքարքա» (= Synoptique) : Այս բառը առաջ եկած է Synopse (յունարէն σύν-ψις = ամբողջութեան տեսութիւն) բառէն, որ խորագիրն է՝ J. J. Griesbachի կողմէ 1774ին լոյս տեսած հրատարակութեան մը¹ :

Վերոյիշեալ հրատարակութեան մէջ՝ Մատթէոսի, Մարկոսի եւ Ղուկասի Աւետարանները, դիմացէ դիմաց, երեք տարբեր սիւնակներով տպուած են, զանոնք իրարու հետ դիւրութեամբ բաղդատելու նպատակով :

Ինչպէս ըսինք, երբ առաջին երեք Աւետարանները իրարու հետ բաղդատելու ելլենք, անմիջապէս պիտի անդրադառնանք թէ անոնք իրարու հետ՝ նիւթերու դասաւորումի, դրեւակերպի եւ նոյնիսկ բառամթերքի այնպիսի նմանութիւններ ունին, որ կարծես իրարմէ օրինակուած ըլլան :

Բազմազան նմանութիւններու առնթեր՝ կան, սակայն, այնպիսի տարբերութիւններ, որոնց դոհացուցիչ բացատրութիւն մը տալու համար՝ մասնազէտները շատ մեկն հոսեցուցած են :

Դ. դարուն արդէն, Ս. Օգոստինոս նկատի առնելով Աւետարաններու մէջ գտնուող անհամաձայն կէտերը, աշխատեցաւ իրարու հետ հաշտեցնել՝ արտաքսապէս իրարու հակասող տարբերակները, ցոյց

1. 1950ին, Huck-Lietzmann, յունարէն լեզուով, լոյս ընծայեց խնամուած հրատարակութիւն մը : Աւելի կատարեալը, սակայն, 1964ին, K. Alandի՝ Synopsi quatuor evangeliorum խորագիրով հրատարակած գործն է, որուն մէջ, երեք Աւետարաններուն վրայ՝ աւելցուցած է նաեւ չորրորդ Աւետարանէն համապատասխան հատուածներ :

տալով թէ չորս Աւետարաններն ալ էական ոչ մէկ տարբերութիւն ունին իրարմէ :

Տատիանոս, երկրորդ դարու վերջերը, նման փորձ մը ըրած էր արդէն : Անիկա, չորս Աւետարաններու միաձուլումով՝ մէկ Աւետարան մը կազմած էր, Diatessaron անունով :

Միջին Դարուն, Gerson († 1429), հրատարակելով «Monotessaron, Unum de quatuor» վերնագիրով աշխատասիրութիւնը, ջանացած է բացատրութիւն մը տալ Աւետարաններու մէջ գոյութիւն ունեցող տարբերութիւններուն :

Բազմաթիւ ուրիշ հրատարակութիւններէն կ'արժէ յիշատակել նաեւ Osianderի գործը, որ լոյս տեսած է 1537ին :

ՀԱՄԱՐԱՐԲԱՌ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐՈՒ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Համաքարքաու Աւետարաններու մասին խօսելէ առաջ, լաւ պիտի ըլլայ ակնարկ մը նետել անոնց պարունակութեան վրայ :

Առաջին երեք Աւետարաններու նիւթերը, սովորութիւն եղած է երեք բաժանումներու վերածել եւ կոչել.

ա. Եոթակ աւանդութիւն, այսինքն՝ այն նիւթերը, որոնք հասարակաց են երեք Աւետարաններուն :

բ. Կրկնակ աւանդութիւն, այսինքն՝ այն նիւթերը, որոնք միայն երկու Աւետարաններու հասարակաց են :

Կրկնակ աւանդութիւնն ալ կարելի է բաժնել հետեւեալ ձևով. 1. Մատթէոսի եւ Մարկոսի, 2. Մարկոսի եւ Ղուկասի, 3. Մատթէոսի եւ Ղուկասի :

գ. Միակ աւանդութիւն, այսինքն՝ այն նիւթերը, որոնք յատուկ են միմիայն մէկ Աւետարանի :

ՆՈՒՆԱԿ ԱԻԱՆՈՒԹԻՒՆ

Եոթակ աւանդութեան պատկանող նիւթերը կը դրաւեն Մարկոսի Աւետարանին կէսը, Մատթէոսի Աւետարանին մէկ երրորդը, իսկ Ղուկասի Աւետարանին մէկ երրորդէն քիչ մը նուազ. այսինքն՝ եթէ Մարկոսի Աւետարանին մէջ 660ի մօտ համարներ կան, անոնցմէ 330ը, Մատթէոսի 1068 համարներէն՝ 330ը, ինչպէս նաեւ Ղուկասի 1150 համարներէն՝ 330ը մաս կը կազմեն եոթակ աւանդութեան :

Եոթակ աւանդութեան մասին պէտք է նաեւ աւելցնել՝ թէ Հասարակաց Աւետարաններու մէջ, դէպքերը կը պատմուին ժամանամաքարքաու Աւետարաններու մէջ, այնպիսի կարգով մը՝ որ դրեթէ կազրական եւ աշխարհազրական այնպիսի կարգով մը՝ որ դրեթէ նոյն է երեք Աւետարաններուն մէջ :

Երբեմն, սակայն, Աւետարանիչներէն մէկը կը շեղի հասարակաց ուղիէն: Կարգ-կանոն խախտողը կա'մ Մատթէոսն է եւ կա'մ Ղուկաս: Մարկոս միշտ համաձայն է կա'մ մէկուն եւ կամ միւսին: Այս պարզան ցոյց կու տայ թէ Մարկոս կեդրոնական դեր մը ունի՝ եռեակ աւանդութեան մէջ:

Նոյն բանը կարելի է ըսել գործածուած բառերու մասին: Թէեւ ամէն Աւետարանիչ իր անձնական կնիքը դրած է իր Աւետարանին մէջ, սակայն կան ասացուածքներ եւ բառեր՝ որոնք հասարակաց են երեք Աւետարանիչներուն ալ:

Այս մարզին մէջ ալ, առաւելապէս Մարկոսի գործածած կարգ մը բառերն են՝ որ կը գտնուին երբեմն մէկուն եւ երբեմն միւս Աւետարանիչին մօտ:

Համարաբար Աւետարաններու մէջ, 330-350ի չափ համարներու նմանութիւնը, հոն նկարագրուող դէպքերու յաջորդականութիւնը եւ շատ մը բառերու եւ ասացուածքներու նոյնութիւնը չի կրնար դիպումաբար արդիւնք ըլլալ, այլ կ'ենթադրէ հասարակաց աղբիւր մը, որմէ օգտուած են երեք Աւետարաններն ալ:

Երեք Աւետարաններու միջեւ գտնուող ա'յնքան սերտ նմանութիւններուն գոհացուցիչ բացատրութիւն մը տալու համար, հարկ է ընդունիլ որ այդ հասարակաց աղբիւրը պէտք է գրաւոր եղած ըլլայ: Բերանացի աւանդութիւնը՝ որպէս աղբիւր՝ բաւարար չէ լուծում մը տալու վերոյիշեալ նմանութիւններուն:

Չենք կրնար հաստատել նաեւ՝ որ այդ հասարակաց աղբիւրը, հակառակ հնութեան դրոշմը կրելուն, Մարկոսի Աւետարանն ըլլայ անպայման, քանի որ թէ՛ Մատթէոսի եւ թէ՛ Ղուկասի մօտ կան այնպիսի կտորներ, որոնք Մարկոսի Աւետարանէն աւելի հին եւ նախնական կը թուին ըլլալ:

Կան նաեւ պարզանքներ, ուր Մատթէոս եւ Ղուկաս իրարու նման են եւ կը տարբերին Մարկոսէն: Օրինակ. Մատթէոսի Աւետարանին մէջ, ժողովուրդը Յիսուսի մասին կ'ըսէ. «Ասիկա հիւսին որդին չէ»²: Նմանապէս Ղուկաս կը գրէ. «Ասիկա Յովսէփին որդին չէ»³: Մինչդեռ Մարկոս քիչ մը տարբեր ձեւով՝ կ'ըսէ. «Ասիկա հիւսը չէ»:

Ասոնցմէ զատ՝ Մարկոսի Աւետարանին մէջ կան որոշ թիւով Յիսուսի խօսքեր եւ այլ դէպքերու նկարագրութիւններ, որոնք չեն գրտնուիր Մատթէոսի եւ Ղուկասի մօտ:

Այս բոլոր տուեալները միասին առած, աւելի հաւանական կը գտնենք որ Մարկոսէն հին՝ մէկ կամ մէկէ աւելի աղբիւրներ գոյութիւն ունեցած ըլլան:

ՆՈՒՆԱԿ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՑԱՆԿԸ³

	ՄԱՏԹԵՈՍ	ՄԱՐԿՈՍ	ՂՈՒԿԱՍ
Յովհաննէս Մկրտիչի մասին	Գ. 1-3, 5-6, 11	Ա. 2-5, 7-8	Գ. 2-4, 16
Յիսուսի մկրտութիւնը	Գ. 13, 16-17	Ա. 9-11	Գ. 21-22
Յիսուս անապատին մէջ	Գ. 1-2	Ա. 12-13	Գ. 1-2
Յիսուսի Գալիլեայէն վերադարձը	Գ. 12	Ա. 14	Գ. 14
Առաջին աշակերտներուն կոչումը	Գ. 20, 22	Ա. 18, 20	Ե. 11
Գալիլեայի մէջ քարոզութիւն	Գ. 23, Թ. 35	Ա. 39	Գ. 44
Բորստին բժշկութիւնը	Ը. 1-4	Ա. 40-45	Ե. 12-16
Պետրոսի գոհանջին բժշկութիւնը	Ը. 14-15	Ա. 29-31	Գ. 38-39
Այլ եւ այլ բժշկութիւններ	Ը. 16	Ա. 32-34	Գ. 40-41
Ծովամարիկը	Ը. 18, 23-27	Գ. 35-41	Ը. 22-25
Գերգեսացի դիւանաբներու բժշկութիւնը	Ը. 28-34	Ե. 1-20	Ը. 26-39
Անդամաւոյծին բժշկութիւնը	Թ. 1-8	Բ. 1-12	Ե. 17-26
Մատթէոսի կոչումը	Թ. 9-13	Բ. 13-17	Ե. 27-32
Ծոմապահութիւն	Թ. 14-17	Բ. 18-22	Ե. 33-39
Յայրոսի աղբիւրը և տեառտես կիւնը	Թ. 18-26	Ե. 21-43	Ը. 40-56
Առաքելներու ընտրութիւնը	Թ. 1-4	Գ. 13-14, 16-19	Ը. 12-16
Առաքելներու քարոզութիւնը	Թ. 5-16	Ը. 7-11	Թ. 1-16, Թ. 1-5
Շաբաթի մասին վէճ	Թ. 1-4, 8	Բ. 23-28	Ը. 1-5
Գօսացած ձեռնով մարդը	Թ. 9-10, 12-14	Գ. 1-6	Ը. 6-11
Ամբոյսը եւ բժշկութիւններ	Թ. 15-16, Գ. 24-25	Գ. 7-8, 10-12	Ը. 17-19
Յիսուսի ինքնապաշտպանութիւնը	Թ. 24-66, 29, 31-32	Գ. 22-30	Թ. 15-18, 21-22, Թ. 10
Յիսուսի ազգականները	Թ. 46-50	Գ. 31-35	Ը. 19-21
Սերմանացանի առակը	Թ. 1-9	Գ. 1-9	Ը. 4-8
Առակներու նպատակը	Թ. 10-11, 13	Գ. 10-12	Ը. 9-10
Սերմանացանի առակին մեկնութիւնը	Թ. 18-23	Գ. 13-20	Ը. 11-15
Մանամեթի հատիկը	Թ. 31-32	Գ. 30-32	Թ. 18-19
Յիսուս Նազարէթի մէջ	Թ. 53-58	Ը. 1-6	Գ. 16-30
Հերովդէսի եւ ուրիշներու կարծիքը Յիսուսի մասին	Թ. 1-2	Ը. 14-16	Թ. 7-9
Հացերու առաջին քաղցրացումը	Թ. 13-21	Ը. 32-44	Թ. 10-17
Երկինքէն նշան	Թ. 1-2, 4, Թ. 38-40	Ը. 11-13	Թ. 16, 29, 30
Փարիսեցիներուն խմբը	Թ. 5-6	Ը. 15	Թ. 1
Պետրոսի խոստովանութիւնը եւ չարչարաններու առաջին կանխասացութիւնը	Թ. 13-16, 20-21	Ը. 27-31	Թ. 18-22

2. Հմմտ. Մատթ. Թ. Գ. Գ. 22 և Մրկ. Ը. 3:

3. A. G. DA FONSECA, *Questio synoptica*, Romae, 1952, էջ 53-55:

	ՄԱՏԹԵՈՍ	ՄԱՐԿՈՍ	ՂՈՒԿԱՍ
Քրիստոնեական խաչակրություն	ԺԶ. 24-28	Ը. 34 - Թ. 1	Թ. 23-27
Այլաներպություն	ԺԵ. 1-8	Թ. 2-8	Թ. 28-36
Լուսնոստին բժշկությունը	ԺԵ. 14-21	Թ. 14-29	Թ. 37-43
Զարչարանգնություն երկրորդ կամ- խասացությունը	ԺԵ. 22-23	Թ. 30-32	Թ. 43-45
Փոքրիկ մանուկը	ԺԸ. 1-5	Թ. 33-37	Թ. 46-48
Գայթակղություն	ԺԸ. 6-7	Թ. 42	ԺԵ. 1-2
Գալիլեայում նրա սաղմ	ԺԹ. 1-2	Ժ. 1	Թ. 51
Ապառախություն	ԺԹ. 3-12, Ե. 32	Ժ. 2-12	ԺԶ. 18
Յիսուս մանուկները կ'օրհնե	ԺԹ. 13-15	Ժ. 13-16	ԺԸ. 15-17
Ներսիսաբարդ հարուստը	ԺԹ. 16-26	Ժ. 17-27	ԺԸ. 18-27
Յիսուսի հետևողներում վարձքը	ԺԹ. 27-30	Ժ. 28-31	ԺԸ. 28-30
Զարչարանգնություն երրորդ կամ խա- սացությունը	Ի. 17-19	Ժ. 32-34	ԺԸ. 31-34
Ու՛վ կ'ուզե մեծ եւ առաջին ըլլալ	Ի. 24-28	Ժ. 41-45	ԻԲ. 24-27
Ներհավի կոյրերը	Ի. 29-34	Ժ. 46-52	ԺԸ. 35-43
Նրա սաղմ յաղթական մուտքը	ԻԱ. 1-3, 6-11	ԺԱ. 1-11	ԺԹ. 28-38
Տաճարին մաքրագործումը	ԻԱ. 12-17	ԺԱ. 15-19	ԺԹ. 45-48
Յիսուսի իշխանությունը	ԻԱ. 23-27	ԺԱ. 27-33	Ի. 1-8
Զար մշակները	ԻԱ. 33-46	ԺԲ. 1-12	Ի. 9-19
Կեսարիին տուրքը	ԻԲ. 15-22	ԺԲ. 13-17	Ի. 20-26
Մաղակեցիները եւ յարությունը	ԻԲ. 23-33	ԺԲ. 18-27	Ի. 27-40
Մեսիան՝ Գալիլեայի որդին եւ տերը	ԻԲ. 41-46	ԺԲ. 35-37	Ի. 41-44
Վա՛յ ձեզ դպիրներ եւ փարիսեցիներ	ԻԳ. 1-7, 14	ԺԲ. 37-40	Ի. 45-47
Աշխարհի վախճանը	ԻԳ. 1-25	ԺԳ. 1-23	ԻԱ. 5-24
Աշխարհի վախճանին ճշմանները	ԻԳ. 29-31	ԺԳ. 24-37	ԻԱ. 25-28
Աշխարհի վախճանին ժամանակը	ԻԳ. 32-35	ԺԳ. 28-31	ԻԱ. 29-33
Արքունի մնացող ծառաները	ԻԳ. 45-47	ԺԳ. 33-37	ԺԲ. 41-44
Յուդայի մատուցությունը	ԻԶ. 1-5, 14-16	ԺԳ. 1-2, 10-11	ԻԲ. 1-6
Վերջին ընթերցի պատրաստություն	ԻԶ. 17-20	ԺԳ. 12-17	ԻԲ. 7-14
Յուդայի մատուցության յայտնումը	ԻԶ. 21-24	ԺԳ. 18-21	ԻԲ. 21-23
Ս. Հաղորդություն հաստատումը	ԻԶ. 26-29	ԺԳ. 22-25	ԻԲ. 18-20
Ձիթենիներու պարտեզ երթը	ԻԶ. 30	ԺԳ. 26	ԻԲ. 39
Կամխասացություն Պետրոսի ուրա- ցումին	ԻԶ. 31-35	ԺԳ. 27-31	ԻԲ. 31-34
Ձիթենիներու պարտեզին մեջ ա- ղօթք եւ տառապանք	ԻԶ. 36-46	ԺԳ. 32-42	ԻԲ. 45-46
Յիսուսի ձերբակալությունը	ԻԶ. 47-52	ԺԳ. 43-50	ԻԲ. 47-50
Յիսուս կայիափայի աղջիկ	ԻԶ. 57-68	ԺԳ. 53-65	ԻԲ. 54-55, 63-71
Պետրոսի ուրաքումը	ԻԶ. 69-75	ԺԳ. 66-72	ԻԲ. 56-62
Յիսուս եւ Պիլատոս	ԻԵ. 1-2	ԺԵ. 1	ԻԳ. 1
Յիսուս Պիլատոսի աղջիկ	ԻԵ. 11-14	ԺԵ. 2-5	ԻԳ. 2-5
Յիսուս եւ Բարաբբա	ԻԵ. 15-23	ԺԵ. 6-14	ԻԳ. 17-23
Յիսուս դատապարտում՝ Պիլա- տոսին	ԻԵ. 26	ԺԵ. 15	ԻԳ. 24-25

	ՄԱՏԹԵՈՍ	ՄԱՐԿՈՍ	ՂՈՒԿԱՍ
Դեպի Գաղատիա	ԻԵ. 31-32	ԺԵ. 20-21	ԻԳ. 26
Յիսուս կը խաչուի	ԻԵ. 33-38	ԺԵ. 22-28	ԻԳ. 33-35, 38
Յիսուս կը ծաղրուի	ԻԵ. 41-44	ԺԵ. 31-32	ԻԳ. 35-37, 39
Յիսուսի մահը	ԻԵ. 45-52, 54-56	ԺԵ. 33-41	ԻԳ. 44-49
Յիսուսի քաղուսը	ԻԵ. 57-61	ԺԵ. 42-47	ԻԳ. 50-56
Յիսուսի յարությունը	ԻԸ. 1-8	ԺԶ. 1-8	ԻԳ. 1-11

ԿՐԿՆԱԿ ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆ

Ինչպէս ըսինք, կրկնակ աւանդութիւն ըսելով՝ կը հասկնանք այն նիւթերը, որոնք միմիայն երկու Աւետարաններուն (Մատթէոսի եւ Մարկոսի, կամ Ղուկասի եւ Մարկոսի, եւ կամ ալ Մատթէոսի եւ Ղուկասի Աւետարաններուն) յատուկ են:

Մատթէոսի եւ Ղուկասի Աւետարաններէն իւրաքանչիւրին մէկ հինգերորդը, մօտաւորապէս 230-240 համարներ, մաս կը կազմեն կրկնակ աւանդութեան:

Վերոյիշեալ նիւթերը, մեծ մասով Քրիստոսի խօսքերն են: Ուր-պէս պատմական նիւթ, հոն կը գտնենք Յովհաննէս Մկրտիչի կեանքը եւ առաքելութիւնը, Յիսուսի փորձութիւնները, Հարիւրապետի ծառային եւ դիւհարին բժշկութիւնները, ինչպէս նաեւ Յովհաննէս Մկրտիչի աշակերտներուն երթը Յիսուսի մօտ:

Մատթէոսի եւ Ղուկասի կրկնակ աւանդութեան նիւթերը եւ ա-նոնց դասաւորումը, եթէ տեղ տեղ նման են իրարու, ուրիշ տեղեր ալ բոլորովին կը տարբերին իրարմէ: Նոյն բանը կարելի է ըսել նաեւ անոնց գրեկականի եւ բառամթերքի մասին⁴:

Մատթէոսի եւ Ղուկասի Աւետարաններուն մէջ տիրող տարբե-րութիւնները երբեմն այնքան խոր են, օրինակ՝ Յիսուսի աղաքարնու-թիւնը եւ մանկութեան նկարագրութիւնը, որ բանասէրներէն շատեր կը մերժեն ուղղակի ոչ մէկ առնչութիւն ընդունել վերոյիշեալ եր-կու Աւետարաններու միջեւ:

Եթէ, մէկ կողմէ, երկու Աւետարաններու միջեւ երեւոյղ տարբե-րութիւններէն կ'եղրակացնենք թէ Մատթէոս եւ Ղուկաս, ուղղակի իրարմէ չեն օգտուած, միւս կողմէ, սակայն, անոնց մօտ գտնուող բացայայտ նմանութիւններն ալ կը ստիպեն մեզ՝ որ երկուքին հա-մար ընդունինք հասարակաց աղբիւր մը կամ աղբիւրներ, որոնցմէ օգտուած են երկուքն ալ:

4. Հմտ. Մտթ. ԺԱ. 25-27 եւ Ղուկ. Ժ. 21-22; Մտթ. Ի. 24-27 եւ Ղուկ. Զ. 47-49:

Մատթեոսի եւ Մարկոսի
կրկնակ աւանդութեան ցանկը

	ՄԱՏԹԵՈՍ	ՄԱՐԿՈՍ
Յովհաննէս Կարապետ	Գ. 4	Ա. 6
Յիսուս անապատին մէջ	Դ. 11	Ա. 13
Ապաշխարութեան մասին	Դ. 17	Ա. 14-15
Առաջին առաքելութեան կոչումը	Դ. 18-22	Ա. 16-20
Գաւաթ մը ջուր	Ժ. 42	Թ. 14
Առակներու նպատակը	ԺԳ. 34-35	Դ. 33-34
Յովհաննէս Մկրտիչի սպանութիւնը	ԺԴ. 3-12	Զ. 17-29
Յիսուս ջուրներու վրայէն կը քալէ	ԺԴ. 22-27, 32-33	Զ. 45-52
Յիսուս Գալիլեա կը դառնայ	ԺԴ. 34-36	Զ. 53-56
Աւանդութիւններու մասին	ԺԵ. 1-11, 15-20	Է. 1-23
Քանանացի կինը	ԺԵ. 21-28	Է. 24-30
Խուլ համբը	ԺԵ. 29-31	Է. 31-37
Հացերու երկրորդ երաշխ	ԺԵ. 32-39	Ը. 1-10
Փարիսեցիներու խնդր	ԺԶ. 5-12	Ը. 14-21
Պետրոսի վիճաբանութիւնը	ԺԶ. 22-23	Ը. 32-33
Նոյնի գալուստը	ԺԶ. 9-13	Թ. 9-13
Ամուսնութեան անլուծանելիութիւնը	ԺԹ. 3-9	Ժ. 2-12
Զեքեղէսի որդիները	Ի. 20-28	Ժ. 35-45
Անիծումը քղնիին	ԻԱ. 18-22	ԺԱ. 12-14, 20-25
Առաջին պատուիրանը	ԻԲ. 34-40	ԺԲ. 28-34
Բեքանիայի ընթերցի	ԻԶ. 6-13	ԺԴ. 3-9
Պարտէզին մէջ առաջին եւ երկրորդ աղօթքը	ԻԶ. 42-46	ԺԴ. 39-42
Սուտ վկաներ Կայափայի առջեւ	ԻԶ. 60-63	ԺԴ. 56-61
Յիսուսի ճաղկումը եւ փշապսակը	ԻԷ. 26-31	ԺԵ. 15-20
Լեզիով խառն Գիթի	ԻԷ. 34	ԺԵ. 23
Անցորդներու հայեայնականութիւնը	ԻԷ. 39-40	ԺԵ. 29-30
«Էլի Էլի, լումա՞ սաքաքաք»	ԻԷ. 46-47	ԺԵ. 34-35

Մարկոսի եւ Ղուկասի
կրկնակ աւանդութեան ցանկը

	ՄԱՐԿՈՍ	ՂՈՒԿԱՍ
Դիւանաբան Բժշկութիւնը	Ա. 23-28	Դ. 33-37
Դեւերը կը գանձան Յիսուսը	Ա. 34, Գ. 11	Դ. 41
Յիսուս կ'աղօթէ առանձին	Ա. 35-38	Դ. 42-43
Մածուկ բան չկայ	Դ. 21-25	Ը. 16-18
Գերգետնացի դիւանաբան	Ե. 18-20	Ը. 38-39
Աշակերտներու առաքելութիւնը	Զ. 12-13	Թ. 6
Առաքելութեան վերադարձը	Զ. 30	Թ. 10
Ներդաւանութիւն	Թ. 38-40	Թ. 49-50
Այբի տիկնոջ լուման	ԺԲ. 41-44	ԻԱ. 1-4

Մատթեոսի եւ Ղուկասի
կրկնակ աւանդութեան ցանկը

	ՄԱՏԹԵՈՍ	ՂՈՒԿԱՍ
Յովհաննէս Մկրտիչի քարոզութիւնը	Գ. 7-10, 12	Գ. 7-9, 17
Փորձութիւնները	Դ. 3-11	Դ. 3-13
Նրանցութիւնները	Ե. 1-3, 6, 11-12	Զ. 20-23
Աշակերտները աղ եւ լոյս երկրի	Ե. 13, 15	ԺԴ. 34-35, ԺԱ. 33
«Երկինք եւ երկիր պիտի անցնին»	Ե. 18	ԺԶ. 17
Թշնամիին հետ հաշտութիւն	Ե. 25-26	ԺԲ. 57-59
Ներդաւանութիւն	Ե. 38-42	Զ. 29-30
Սիրելի բշտակները	Ե. 43-48	Զ. 27-28, 32, 36
«Հայր մեր»	Զ. 9-10, 11-13	ԺԱ. 2-4
«Գամա մի՛ դիզէք»	Զ. 19-21	ԺԲ. 33-34
Մաքուր աչք, մաքուր սիրտ	Զ. 22-23	ԺԱ. 34-36
Աստուած եւ Մամոնայ	Զ. 24	ԺԶ. 13
Ունայն մտահոգութիւններ	Զ. 25-34	ԺԲ. 22-32
«Մի՛ դատէք»	Է. 1-5	Զ. 37-38, 41-42
«Ենդրեցէ՛ք եւ պիտի տրուի»	Է. 7-11	ԺԱ. 9-13
Ընկերոջ համդէպ սէր	Է. 12	Զ. 31
Նեղ դուռ	Է. 13-14	ԺԴ. 23-24
Բարի եւ չար ծառեր	Է. 15-20	Զ. 43-44
Ըսել եւ ընել	Է. 21-23	Զ. 46, ԺԴ. 26-27
Նորակազմութիւն	Է. 24-27	Զ. 47-49
Հարիւրապետը	Ը. 5-10, 13	Է. 1-10
Արքայապետի հետ նստողները	Ը. 11-12	ԺԴ. 28-29
Յովհաննէս Մկրտիչի պատգամաւորները	ԺԱ. 2-6	Է. 18-19, 22-23
Յիսուս կը գովէ Յովհաննէս Մկրտիչը	ԺԱ. 7-19	Է. 24-28, 31-35
Համբ դիւանաբան Բժշկութիւնը	ԺԲ. 22-23	ԺԱ. 14
Յիսուսի ինքնապաշտպանութիւնը	ԺԲ. 27-28, 30	ԺԱ. 19-20, 23
Սրտի բարի գանձերէն	ԺԲ. 35	Զ. 45
Պիղծ ոգին	ԺԲ. 43-45	ԺԱ. 24-26
«Նրանք՝ ձեր աչքերուն»	ԺԴ. 16-17	Ժ. 23-24
Խմորի առակը	ԺԴ. 33	ԺԴ. 20-21
«Նսեւէդ պիտի գամ»	Ը. 19-22	Թ. 57-60
Հալածմաններու մէջ յարատեւել	Ժ. 23-33	Զ. 40, ԺԲ. 2-9
«Ոչ բէ խաղաղութիւն, այլ սուր»	Ժ. 34-39	ԺԲ. 51-53, ԺԴ. 25-27, ԺԷ. 33
«Ո՛վ որ ձեզ ընդունի, զիս կ'ընդունի»	Ժ. 40	Ժ. 16
«Վա՛յ ձեզ, Գորազին»	ԺԱ. 20-24	Ժ. 13-15
Գոհութիւն երկնաւոր Հօր	ԺԱ. 25-27	Ժ. 21-22
«Կայրը կայրին երբ առաջնորդէ»	ԺԵ. 12-13	Զ. 39
Մոլորեալ ոչխարը	ԺԸ. 10-14	ԺԵ. 1-7
«Եթէ եղբայրդ մեղանչէ»	ԺԸ. 15, 21-22	ԺԷ. 3-4
Թագաւորի տղան հարսանիքը	ԻԲ. 1-10	ԺԴ. 15-24
Փարիսեցիները ծանր լուծ կը դնեն	ԻԴ. 4	ԺԱ. 45
«Կը փակեն երկինքի դուռերը»	ԻԴ. 13	ԺԱ. 52
«Ամանութիւն... տասանորդ կու տամ»	ԻԴ. 23-24	ԺԱ. 42

	ՄԱՏԹԵՈՍ	ՂՈՒԿԱՍ
«Գաւաթին արտաքինը կը սրբեն»	ԻԳ. 25-36	ԺԱ. 39-41, 44, 47, 50, 53-54
Երուսաղէմ, Երուսաղէմ	ԻԳ. 37-39	ԺԳ. 34-35
«Ահաւասիկ ամապատին մէջն է»	ԻԴ. 26-28	ԺԵ. 22-25, 37
«Հսկեցէ՛ք եւ արքունի կեցէ՛ք»	ԻԴ. 37-42	ԺԵ. 26-32, 34-35
Եթէ տամտէրը գիտմար»	ԻԴ. 43-44	ԺԶ. 39-40
Հատարարիմ ծառամ	ԻԴ. 45-51	ԺԶ. 41-48
Քամեարմերու առակը	ԻԵ. 14-30	ԺԹ. 11-27

ՀԱՄԱՐԱՐԱՌ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՆԻԻԹԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երեք Աւետարաններու նիւթերը կարելի է բաժնել հետեւեալ չորս ընդհանուր մասերուն.

	ՄԱՏԹԵՈՍ	ՄԱՐԿՈՍ	ՂՈՒԿԱՍ
Ա.- ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՈՒՄԻ ԱՌԱՔՆԼՈՒԹԵԱՆ	Գ. 1-Դ. 11	Ա. 1-13	Գ. 1-Դ. 13
Բ.- ԳԱԼԻԼԵԱՅԻ ՄԷՋ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՔՆԼՈՒԹԻՒՆԸ	Դ. 12-ԺԸ. 35	Ա. 14-Թ. 50	Դ. 14-Թ. 50
Գ.- ԴԵՊԻ ԵՐՈՒՍԱԼԷՄ	ԺԸ. 1-Ի. 34	Ժ. 1-56	Թ. 51-ԺԱ. 43
Դ.- ՔՐԻՍՏՈՍԻ ԶԱՐԶԱՐԱՆՔՆԵՐԸ ԵՆ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ	ԻԱ. - ԻԸ.	ԺԱ. - ԺԶ.	ԺԹ. - ԻԹ.

Երեք Աւետարաններու վերոյիշեալ նիւթերը իրարու հետ բաղդատելով, կը տեսնենք թէ երեք Աւետարանիչներն ալ, հակառակ իրենց կողմէ ըրած յաւելումներուն կամ յապաւումներուն, իրարմէ կամ հասարակաց միեւնոյն աղբիւրէ մը կամ աղբիւրներէ օգտուած են:

Սակայն, շատ մը նմանութիւններու առընթեր՝ կան նաեւ իրարմէ զգալի տարբերութիւններ:

Օրինակ՝ Յիսուսի աղգարանութիւնը կը գտնենք թէ՛ Մատթէոսի⁵ եւ թէ՛ Ղուկասի մօտ⁶: Սակայն, երկու աղգարաններուն մէջ, իրարմէ տարբեր անուններ կը օգտուին⁷:

«Հայր մեր» աղօթքին մէջ, Մատթէոսի մօտ եօթը խնդրանքներ կան, մինչդեռ Ղուկասինը հինգ խնդրանքներ ունի միայն:

Մատթէոսի (Ժ. 10) եւ Ղուկասի (Թ. 3 եւ Ժ. 4) համարներուն

5. Մտթ. Ա. 1-16:

6. Ղուկ. Գ. 23-38:

7. Անուններու տարբերութեան պատճառը այն է, որ մէկը ուղած է օրինական, մինչ միւսը բնական հայրերու անունները յիշատակել:

համաձայն, Յիսուս իր աշակերտներուն կը պատուիրէ՝ որ ճամբորդութեան ընթացքին, հետեւին իր բան մը չկրեն. մինչդեռ Մարկոսի (Զ. 8) համարին համաձայն՝ Յիսուս կը թոյլատրէ որ դաւազան մը ունենան:

Տարբեր խմբագրութիւններ են նաեւ Յիսուսի լերան քարոզը⁸ եւ Ս. Հաղորդութեան հաստատման խօսքերը⁹:

Մատթէոսի մօտ, հարիւրապետը անձամբ կը ներկայանայ Յիսուսի¹⁰, մինչդեռ Ղուկասի համաձայն՝ հարիւրապետը պատուիրակ մը կը ղրկէ Յիսուսի:

Մատթէոս՝ Երեքովի մօտ երկու կոյրերու մասին կը խօսի, մինչդեռ Մարկոսի եւ Ղուկասի համաձայն՝ միայն մէկ կոյր է որ կը բուստուի Յիսուսէն¹¹: Նմանապէս Գերգեսացի դիւհաւանները երկու հատ ժողովի Յիսուսէն¹²: Նմանապէս Գերգեսացի դիւհաւանները երկու հատ ժողովի Յիսուսէն¹³:

Յիսուսի յարութեան նկարագրութեան մէջ, Մատթէոսի եւ Մարկոսի համաձայն, միայն մէկ հրեշտակ կայ Յիսուսի գերեզմանին մէջ, մինչդեռ Ղուկասի համաձայն՝ երկու հատ են հրեշտակները¹³: Կան նաեւ ուրիշ նման տարբերակներ, որոնք թէեւ պատմութեան էութեան չեն դաշխի, բայց տարբեր աղբիւրներու զոյգութիւնը կը մատնանշեն:

Իսկ դալով պատմուած նիւթերու կարգ կանոնին, ընդհանրապէս Մարկոս եւ Ղուկաս¹⁴ իրարու հետ հաշտ կ'ընթանան, մինչդեռ Մատթէոս տարբեր ուղի մը կը բռնէ, գլխաւորապէս Յիսուսի քարոզներու եւ առակներու պատմութիւն ընթացքին: Մատթէոս սովորութիւն ունի Յիսուսի խօսքերը մէկտեղել, մինչդեռ Ղուկասի մօտ՝ անոնք իրարմէ բաժնուած ձեւով կը ներկայանան մեզի:

Ահա ցանկը այն գլուխներուն, որոնց մէջ Մատթէոս եւ Մարկոս պահած են միեւնոյն կարգը.

ՄԱՏԹԵՈՍ	ՄԱՐԿՈՍ
Ե. 28 - Ը. 16	Ա. 21 - 45
Թ. 1 - 17	Բ. 1 - 22
ԺԲ. 1 - 14	Բ. 23 - Գ. 6
ԺԲ. 22 - ԺԳ. 34	Գ. 22 - Դ. 34
Ը. 18 - 34	Դ. 35 - Ե. 20
Թ. 18 - 26	Ե. 21 - 43

8. Մտթ. Ե. 1-12 եւ Ղուկ. Զ. 20-26:

9. Մտթ. ԻԶ. 26-28 եւ Ղուկ. ԻԲ. 19-20:

10. Մտթ. Ը. 5 եւ Ղուկ. Է. 3:

11. Մտթ. Ի. 30, Մրկ. Ժ. 46 եւ Ղուկ. ԺԸ. 35:

12. Մտթ. Ը. 28, Մրկ. Ե. 2:

13. Մտթ. ԻԸ. 2, Մրկ. ԺԶ. 5 եւ Ղուկ. ԻԴ. 4:

14. Հմտ. Մրկ. Ա. 21-Զ. 13 եւ Ղուկ. Դ. 31-Թ. 6:

Մինչդեռ Մարկոսի հետեւեալ գլուխները՝ Ա. 40-45, Դ. 25, Դ. 35-Ե. 20, Ե. 21-43, Մատթէոսի մօտ տարբեր ընթացք մը բռնած են:

Ղուկաս, նոյնիսկ իր կողմէ յաւելումներ կամ յապաւումներ ընելու պարագային, ընդհանրապէս Մարկոսին կը հետեւի: Երբեմն, սակայն, ունի կարգ կանոնի խախտումներ. այսպէս՝ Յիսուսի Նազարէթ այցելութիւնը¹⁵, առաքեալներու ընտրութիւնը¹⁶, վաճառականներու տաճարէն վռնտուիլը¹⁷, Յիսուսի խաչելութեան նկարագրութիւնը, եւ այլ¹⁸ նիւթեր, տարբեր դասաւորում ունին Մարկոսի եւ Ղուկասի մօտ:

Բացի նիւթերու տեղափոխութիւններէն, կան նաեւ միեւնոյն նիւթին մէջ, մասնակի տեղափոխութիւններ: Օրինակ՝ Յիսուսի կրած երեք փորձութիւններու շարքը, տարբեր է Մատթէոսի եւ Ղուկասի մօտ: Մատթէոս իբր երկրորդ փորձութիւն կը պատմէ այն պարագան՝ ուր Յիսուս սատանային կողմէ տաճարի աշտարակին վրայ կը կանգնի¹⁹: Մինչդեռ Ղուկասի մօտ, երկրորդ փորձութեան նկարագրութեան մէջ, Յիսուսը սատանայի կողմէ լեռ կը բարձրանայ²⁰:

Ուրիշ օրինակ. Մատթէոս սերմանացանի առակին մէջ՝ կը գրէ. «Եւ ուրիշներ (սերմեր) լաւ հողի վրայ ինկան եւ պտուղ տուին, մէկը՝ հարիւր, մէկը՝ վաթսուն եւ մէկը՝ երեսուն» (Մտթ. ԺԳ. 8): Մարկոս յեղաշրջելով թիւերու կարգը՝ կ'ըսէ. «մէկի տեղ՝ երեսուն, մէկի տեղ՝ վաթսուն եւ մէկի տեղ՝ հարիւր» (Մրկ. Դ. 8):

Մեր ուսումնասիրութիւնը խորացնելով կը նշմարենք նաեւ, որ երեք Աւետարաններու մէջ գոյութիւն ունին աւելորդաբանութիւններ, ասացուածքներու, բայերու՝ դասական ձեւով դործածութեան նմանութիւններ:

Օրինակ՝ Մատթէոս կը գրէ. Յիսուս տեսաւ Սիմոնը եւ Անդրէասը, որոնք ուռկան կը նետէին ծովը, «վասնզի ձկնորս էին» (Մտթ. Դ. 18): Նոյն բացատրական արտայայտութիւնը կայ նաեւ Մարկոսի մօտ, որ կ'ըսէ. «ուռկանները ծով ձգեր էին, վասնզի ձկնորս էին» (Մրկ. Ա. 16):

Նմանապէս Մատթէոսի մօտ կը գտնենք. «Դանիէլ մարգարէին բերնով ըստած է - կարդացողը թող հասկնայ...» (Մտթ. ԻԴ. 15): Մարկոս եւս կը կրկնէ նոյն բացատրութիւնը. «Եւ երբ տեսնէք աւերածին պղծութիւնը կանգնած հոն՝ ուր պէտք է որ ըլլայ - կարդացողը թող հասկնայ» (Մրկ. ԺԳ. 14):

15. Մրկ. Զ. 1-6 եւ Ղուկ. Դ. 16-30:

16. Մրկ. Ա. 16-20 եւ Ղուկ. Ե. 1-11:

17. Մրկ. ԺԱ. 15-19 եւ Ղուկ. ԺԺ. 45-48:

18. Մրկ. Գ. 22-30, Դ. 30-32, Բ. 42-48, Ժ. 11-31, ԺԲ. 28-34, ԺԳ. 15-23, 33-37:

19. Մտթ. Դ. 5:

20. Ղուկ. Դ. 5:

Երեք Աւետարաններու միջև զգալի են նաեւ բառերու նմանութիւններ: Պարզ օրինակ մը տուած ըլլալու համար, ըսենք թէ Յովհաննէս Մկրտիչի քարոզութիւնը, Մատթէոս եւ Ղուկաս նկարագրած են մօտաւորապէս վաթսուն բառերով, որոնք, մեծ մասով, իրարու նման են:

Նմանապէս, զարմանալիօրէն կը հանդիպինք քանի մը հաղուադիւտ բառերու, օրինակ ἀπαρθῆ²¹ = պիտի առնուի, ἐπιβληα²² = կարկտան, κατεγέλων αὐτοῦ²³ = կը ծաղրէին զինքը, եւ այլն, որոնք ամբողջ Նոր Կտակարանի մէջ, միմիայն վերոյիշեալ տեղերը կը գտնուին:

Նկատելի է նաեւ, որ Հին Կտակարանէն այնպիսի մէջբերումներ կան երբեմն, որոնք նման են երեք Աւետարաններու մէջ, բայց երբայցեբէրէն բնագիրին կամ Եօթանասնից յունարէն թարգմանութեան մէջ՝ տարբեր երանգաւորում ունին:

Այս մէջբերումներէն են օրինակ, Եսայի մարգարէէն առնուած սա տողերը. «Ահա ձայնը անոր, որ կը գոչէ անապատին մէջ. պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը եւ հարթեցէ՛ք անոր շաւիղները»²⁴: Եւ կամ. «վասնզի ասոր մասին է գրուածը. ահա ես իմ պատգամաւորս կը զրկեմ առջեւէդ, որ քու ճանապարհդ պատրաստէ առջեւդ»²⁵:

Համարաբար Աւետարաններու մէջ գտնուող վերոյիշեալ նմանութիւնները, մէկ կողմէ եթէ մեզ կը մղեն մտածելու՝ թէ անոնք իրարմէ օգտուած են, միւս կողմէ, սակայն, անոնց մէջ գտնուող անհամաձայն կէտերը կը մղեն մեզ զանազան ենթադրութիւններու դիմել: Այս նիւթի մասին՝ յաջորդաբար պիտի տեսնենք մասնագէտներու կարծիքներէն գլխաւորները:

(Շար. 7)

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

21. Մտթ. Բ. 15 = Մրկ. Բ. 20 = Ղուկ. Ե. 35:

22. Մտթ. Բ. 16 = Մրկ. Բ. 21 = Ղուկ. Ե. 36:

23. Մտթ. Բ. 24 = Մրկ. Ե. 40 = Ղուկ. Ը. 53:

24. Մտթ. Գ. 3 = Մրկ. Ա. 8 = Ղուկ. Գ. 4:

25. Մտթ. ԺԱ. 10 = Մրկ. Ա. 2 = Ղուկ. Է. 27. տե՛ս նաեւ Մտթ. Դ. 4, Դ. 7, ԻԲ. 24, ԻԲ. 37, ԻԶ. 31: